Հավելված N 3
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 11-ի N 1831 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՍՏՈՒԳԱԹԵՐԹ N 3
ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

_____ _____
Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) ստորաբաժանման անվանումը, հեռախոսահամարը, գտնվելու վայրը

_____ _____
ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը ազգանունը, անունը, հայրանունը

_____
_____
ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը ազգանունը, անունը, հայրանունը

Դիտարկման սկիզբը (ամսաթիվը)՝ __20__թ._____ ավարտը՝____20 __թ_____

_____
Մասնագետի անունը/հայրանունը/ազգանունը

ՀԱՐՑԱՇԱՐ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովների անդամների կողմից իրականացվող գործընթացի նկատմամբ դիտարկումների իրականացման

Հ/Հ	Հարց	Հղում նորմատիվ ակտին	Այո	Ոչ	Չ/պ	Կշիռ	Ստուգման տեսակը	Մեկնաբանություն
1.	Անձանց էլեկտրոնային գործերի ուսումնասիրությունը, անձանց զննությունը, նշված հիմքերով էլեկտրոնային համակարգում արդյունքների լրացումը իրականացվել է գնահատման համար նշանակված օրը	ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1180-Ն որոշման հավելվածի 38-րդ կետ				5	փաստաթղթային	
2.	Լրացուցիչ հետազոտման ծրագրերով նախատեսված տվյալներն էլեկտրոնային համակարգով ստանալուց հետո ֆունկցիոնալության գնահատման որոշումներն (վարչական ակտ) ընդունել են ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում	ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1180-Ն որոշման հավելվածի 39-րդ կետ				5	փաստաթղթային	

3.	Անձի ֆունկցիոնալության գնահատման ընթացքում լրացուցիչ մասնագետի (մասնագետների) անհրաժեշտության պարագայում դրա մասին նշումը էլեկտրոնային համակարգում կատարվել է գնահատման օրը	ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1180-Ն որոշման հավելվածի 40-րդ կետ				5		
4.	Գնահատման ներկայացված բոլոր ոլորտների ծածկագրերը գնահատվել են սահմանված որակիչներով	ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1177-Ն որոշման հավելվածի 7-րդ կետ				5	փաստաթղթային	
5.	Երեխաների ֆունկցիոնալության գնահատման ժամանակ հաշվի են առնվել երեխաների տարիքով պայմանավորված առանձնահատկությունները՝ սահմանված մեթոդական ուղեցույցների համաձայն	ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1177-Ն որոշման հավելվածի 10-րդ կետ և 13-րդ կետ, «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ				5	փաստաթղթային	
6.	Ըստ սահմանված տեսակների անձի ֆունկցիոնալության գնահատման արդյունքներն ամփոփվել են ֆունկցիոնալության գնահատման արձանագրություններում	ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1177-Ն որոշման հավելվածի 11-րդ				5	փաստաթղթային	

7.	Գնահատող հանձնաժողովի անդամը չի հանդիսացել բուժող կամ գնահատման ուղեգրած բժիշկը կամ այդ անձանց (երեխայի դեպքում՝ նաև ծնողի) հետ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 24-րդ հոդվածով սահմանված ազգակցական կապի մեջ գտնվող անձինք	ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1180-Ն որոշման հավելվածի 9-րդ կետ				5	փաստաթղթային	
8.	Ֆունկցիոնալության սահմանափակման առկայության դեպքում կազմվել են ծառայությունների անհատական ծրագրեր	ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1180-Ն որոշման հավելվածի 43-րդ կետ				5	փաստաթղթային	
9.	Ծառայությունների անհատական ծրագրերի իրականացման ժամկետները որոշվել են սահմանված ընթացակարգի համաձայն	ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1161-Ն որոշման հավելվածի 9-րդ կետ				5	փաստաթղթային	
10.	Ծառայությունների անհատական ծրագրերում փոփոխությունները կատարվել են բացառապես օրենսդրությամբ սահմանված դեպքերում	ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1161-Ն որոշման հավելվածի 14-րդ կետ				5	փաստաթղթային	

Ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝

1. **Կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի «Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 1180-Ն որոշում.**
2. **Կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի «Անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչները և գործիքները հաստատելու մասին» թիվ 1177-Ն որոշում.**

3. **Կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի «Ծառայությունների անհատական ծրագրերը կազմելու և իրականացնելու կարգը հաստատելու մասին» թիվ 1161-Ն որոշում:**

Տեսչական մարմնի ծառայող _____ Հանձնաժողովի անդամ _____
(ստորագրությունը) (ստորագրությունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ